Ցաղուածագիրը կովկասեան ժողովրդական դպրոցների այս բացասական արդիւնքի առաջին և գլխաւոր պատճառը համարում է այն հանգամանքը, որ այդ դպրոցներում ուսուցումը մայրենի լեզուով չէ տեղի ունենում—աւելացնելով, որ մի ժամանակ, երբ Կովկասեան ժողովրդական դպրոցներում ուսուցումը մայրենի լեզուով էր աւանդւում, ռուսաց լեզուն աւելի հիմնաւոր կերպով էին ուսուցանում աշակերտները, քան այժմ։

Այդ մտքի ճշմարտութիւնը ցոյց տալու համար մենք կարող ենք իբրև փաստ առաջ բերել այն հանգամանքը, որ երբ հայոց ծխական դպրոցներում ուսուցումը մայրենի լեզուով էր աւանդւում, հայ աշակերտները և աշակերտուհիներն այնքան հմուտ էին լինում ռուսաց լեզուին, որ շատերը մի ամառուայ ընթացքում միայն պատրաստուելով՝ մտնում էին պետական նոյն իսկ միջնակարգ դպրոցների համապատասխան դասարանները։ Այսօր էլ մենք ունինք ռուսական համալսարաններում բաւականաչափ հայ ուսանողներ, որոնք իրենց ուսման ընթացքն հայոց սեմինարիաներում աւարտելուց յետոյ՝ լաջող քննութիւն տալով հասունութեան վկայական են ձեռք բերել պետական գիմնազիաներում և ապա համալսարան մտել։

ՄԱՆԿԱՎԱՐԺ

ԿԻԼԻԿԻՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

Կ. Պոլսի հայ լրագիրները հաղորդում են, որ Օսմանեան Ինքնակալը իրադէպով հաստատել է Կիլիկիոյ նորընտիր Տ. Տ. Սահակ կաթողիկոս Խապ՝ լենցին և Սսի մայրաւանքում պաշտօնապէս սկսուել է հայրապետի անուան լիշատակութիւնը։ Այս օրերս Կ. Պոլսի պատրիարքութեան կողմից առանձին հրաւիրակ պատգաւորութիւն է ուղևորուում Երուսաղէմ նորին Ամենապատուութեան առաջնորդելու դէպի Սիս, ուր և ըստ հնաւանդ ծէսերի կատարուելու է կաթողիկոսի օծման արարողութիւնը։

ԳՈՂԱՑՈՒԱԾ ՈՐԲԵՐ

Երկու-երեք ամիս է, որ հրապարակի վրայ է մի խումբ թշուառ որբերի սեպհականութեան խնդիրը. ինչ տարօրինակ բան ասես, մեր կեանքումն է պատահում. 14 փոքրիկ, անմեղ, դժբախտ մանուկներ զրկուած ծնողների հոգատար խնամքից, վէճի առարկայ են դարձել։ Մէկն ասում է.